

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ««ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ՀՕ-263-Ն ՕՐԵՆՔԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Աստղիկ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հունիսի 18-ի ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Աստղիկ Հակոբյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Աննա Բեժանյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հոկտեմբերի 1-ին, որով Դիմողը խնդրել է.

«(...):

(...) Որոշել «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 18.06.2026 թվականի ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

(...) ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Սնանկության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային փոխկապակցվածությամբ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, ըստ որի մինչև ՀՕ-263-Ն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված ֆիզիկական անձի կամավոր սնանկության դիմումից ծագած իրավահարաբերության նկատմամբ կարող են կիրառվել հետագայում ուժի մեջ մտած՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նյութաիրավական պահանջներ՝ պայմանավորված դիմումը վերադարձնելուց հետո դրա կրկին ներկայացման դատավարական հանգամանքներով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 73-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

(...) Եթե Սահմանադրական դատարանը գտնի, որ վիճարկվող դրույթը հնարավոր է մեկնաբանել ՀՀ Սահմանադրությանը համապատասխան բովանդակությամբ, բացահայտել դրա սահմանադրաիրավական բովանդակությունն այն իմաստով, որ մինչև ՀՕ-263-Ն օրենքի ուժի մեջ մտնելը ֆիզիկական անձի կողմից ներկայացված սնանկության դիմումից ծագած իրավահարաբերության նկատմամբ հետագայում ուժի մեջ մտած և անձի նյութաիրավական վիճակը վատթարացնող կարգավորումները չեն կարող կիրառվել միայն դիմումը վերադարձվելուց և օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացվելու, ինչպես նաև վերադարձի մասին միջանկյալ դատական ակտը չբողոքարկելու հանգամանքի հիմքով, եթե նման նյութաիրավական հետևանք օրենքով հստակ, որոշակի և կանխատեսելի կերպով սահմանված չէ»:

2. Դիմողը, ներկայացնելով թիվ ՍնԴ/5531/04/26 դատական գործի դատավարական նախապատմությունը, մասնավորապես, նշում է, որ ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հունիսի 18-ի ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասն իր նկատմամբ կիրառվել է այնպիսի մեկնաբանությամբ, որի համաձայն՝ մինչև տվյալ օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված՝

ֆիզիկական անձի կամավոր սնանկության դիմումը վերադարձվելու և օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացվելու դեպքում այն համարվում է նոր դիմում, որի նկատմամբ կիրառվում են նոր իրավակարգավորումները, իսկ «(…) նախորդ վերադարձի մասին որոշումը չբողոքարկելը դադարեցնում է սկզբնական դիմումի հետ դատավարական և իրավական կապը: Հենց ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին տրված այս մեկնաբանության սահմանադրականությունն է հանդիսանում սույն դիմումի առարկան»:

Ըստ Դիմողի՝ ինքը չի պնդում, որ վիճարկվող դրույթը՝ իր բառացի ձևակերպմամբ, անպայմանորեն հակասահմանադրական է: Դիմողը գտնում է, որ ենթադրյալ սահմանադրաիրավական խնդիրն առաջացել է տվյալ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում՝ «Սնանկության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային փոխկապակցվածությամբ, որով 2026 թվականի հուլիսի 9-ին իր կողմից ներկայացված դիմումը հետագայում դիտարկվել է որպես խնդրո առարկա՝ ՀՕ-263-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված նոր դիմում:

Անդրադառնալով վերը վկայակոչված՝ «Սնանկության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասին և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասին՝ Դիմողն ընդգծում է, որ նշված դրույթների սահմանադրականությունն ինքնին սույն դիմումով չի վիճարկվում. դրանք վկայակոչվում են բացառապես վիճարկվող դրույթի իրավակիրառ բովանդակությունը, դրանց համակարգային փոխկապակցվածությունը և այդ փոխկապակցվածությունից առաջացած սահմանադրաիրավական խնդիրը բացահայտելու նպատակով:

Դիմողի պնդմամբ՝ նոր իրավակարգավորման կիրառումը ոչ միայն փոփոխել, այլ նաև էականորեն վատթարացրել է իր իրավական վիճակը՝ իրական խոչընդոտ ստեղծելով իր կողմից 2026 թվականի հուլիսի 9-ին արդեն իսկ ներկայացված պահանջի ըստ էության քննության համար:

Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա՝ ՀՕ-263-Ն օրենքի անցումային դրույթները որևէ կարգավորում չեն պարունակում մինչև տվյալ օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված,

սակայն վերադարձված և դրանից հետո կրկին ներկայացված դիմումների վերաբերյալ. հետևաբար՝ նման պայմաններում իրավական անորոշությունը չէր կարող մեկնաբանվել անձի իրավական վիճակը վատթարացնող ուղղությամբ՝ հաշվի առնելով Սահմանադրության 73-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքը:

Ամփոփելով՝ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ իրավական հարցադրումը. «**Համապատասխանու՞մ է արդյոք ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 73-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 79-րդ հոդվածներին ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին՝ «Սնանկության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային փոխկապակցվածությամբ տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ մինչև ՀՕ-263-Ն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված ֆիզիկական անձի կամավոր սնանկության դիմումը վերադարձվելու և օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացվելու դեպքում համարվում է նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված դիմում, իսկ նախորդ վերադարձի որոշումը չբողոքարկելու հանգամանքով դադարեցվում է սկզբնական դիմումի հետ իրավական շարունակականությունը՝ արդյունքում անձի նկատմամբ կիրառելով նրա իրավական վիճակը վատթարացնող նոր նյութաիրավական պահանջներ** (...)»:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.**

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրության հիշյալ դրույթն ամրագրված է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրված է. «(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (…), ապա այդպիսի

դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի՝ տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (սույն պարագայում՝ նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հունիսի 18-ի ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց:**

Այսպես՝ Դիմողը նշում է. *«Դիմողը 09.07.2026 թվականին օգտվել է դատարան դիմելու իր իրավունքից: Այնուհետև նրա դիմումը մի քանի անգամ վերադարձվել է՝ սկզբում փաստաթղթային թերությունների, հետագայում՝ արդեն նոր օրենքով սահմանված պահանջների հիմքով: Արդյունքում Դիմողի սկզբնական պահանջը որևէ փուլում ըստ էության չի քննվել: Ընդ որում, Դիմողը ոչ թե անգործություն է ցուցաբերել, այլ յուրաքանչյուր վերադարձից հետո շարունակել է դիմել դատարան և փորձել վերացնել մատնանշված թերությունները: Նման պայմաններում վերադարձի վերաբերյալ դատավարական ինստիտուտը և օրենքի փոփոխության ժամանակային կանոնը համակցված մեկնաբանվել են այնպես, որ Դիմողը փաստացի զրկվել է մինչև նոր օրենքի*

ուժի մեջ մտնելը արդեն իսկ ներկայացրած պահանջը նախկին իրավակարգավորման հիման վրա ըստ էության քննության առնելու հնարավորությունից (...)»:

Հաշվի առնելով Դիմողի վերոնշյալ, ինչպես նաև սույն անհատական դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողն **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՍնԴ/5531/04/26 դատական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության առնչությամբ:** Մասնավորապես՝ Դիմողը ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հունիսի 18-ի ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել,** իսկ որպես փաստարկ ներկայացված դիրքորոշումներն առավելապես վերաբերում են վերոնշյալ դատական գործով **ՀՀ սնանկության դատարանի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ թիվ ՍնԴ/5531/04/26 դատական գործով ՀՀ սնանկության դատարանի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Հետևաբար՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Աստղիկ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հունիսի 18-ի ՀՕ-263-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ **Է. ՇԱԹԻՐՅԱՆ**

30 հոկտեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-237